

Ա. Ռ. Ա. Կ.

ՄԵՂՈՒ ԵՒ ՃԱՆՃՔ.

Երկու ճանճ իրարու հետ խօսք դըրին
Որ երթան օտար տեղեր պլտրաին.

Մեղուին ալ հրամցուցին

Որ նա ալ գայ հետերնին.

Արգէն այս այն թուլթակներէն էին լըսեր
Հեռաւոր երկիրներու վրայ մեծ մեծ գովեստներ.

Այն թողունք, իրենք ալ սաստիկ դանդաւտ

Ունէին իրենց հայրենի երկրէն.

« Ամէնքն ըզմեզ, կըսէին, թէ հարուստը թէ աղքատ
Միշտ անդադար կըբըշեն ու կըվարեն

Տըներէն.

Դիմացուելու բան չէ մեր՝ մարդկանց ձեռքէն քաշածը.

Եւ տես սրբան անճոռնի բան է նոցա ըրածը.

Անուշ անուշ բաներով կըզարգարեն սեղաններ,

Ու մեր անոնց մօտեցածն անգամ բընաւ չեն ուղեր.

Ձեն ամըշնար, կառնուն շիշէ ամաններ

Եւ կըծածկեն անոյշներն ու պլտուղներ:

Վայ է մեզի նաեւ աղքատ տըները,

Հոն ալ պատիժ՝ մամուկներուն ճանկերը:

— Երթաք բարով, ձեզի բարի ճանապարհ,

Պատասխանեց մեղուն. հասա ինձ համար

Իմ հայրենիքս աղէկ է,

Ինձի ամէն տեղ մէկ է.

Մեղրիս մոմիս պատճառաւ ամէնքն ինձ պատիւ կուտան,

Թէ գեղացին եւ թէ իշխան.

Իսկ դուք սուր կուզէք գընացէք եղբարք,

Ամէն տեղ նոյնպէս անհանգիստ կըլլաք.

Վասըն զի օգուտ չունիք դուք մէկուն,

Մէկն ալ ձեզ չիտար սէր եւ յարգութիւն.

Միայն մամուկներն այնտեղ ալ շատ են,

Ձեր արիւնն անոնք հոն ալ կըծըծեն »:

Ով որ հայրենեաց օգտին կաշխատի,

Անկից նա դիւրաւ սիրով չըզատուիր.

Իսկ ով հայրենեացն օգուտ մը չունի,

Կըցանկայ երթալ հեռաւոր երկիր.

Բայց որովհետեւ տեղացի ալ չէ,

Դուրէ նախատինք այնքան չըբաշէ,

Եւ կեանքն անօգուտ իրեն եւ ազգի

Մէկուն մէկալին չըզարնէ աչքի:

ՔՌԻԼՈՎ.